

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵԲ-ԲՄԾՁԲ-22/2**

ք. Երևան

«23» «դեկտեմբերի» 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Մինասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

Ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 88200000 (ութսունութ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն 14700000 (տասնչորս միլիոն յոթ հարյուր հազար):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: **Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:**

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի շինարարության և բարեկարգման վարչության աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

Երևանի քաղաքապետարան

ք. Երևան, Արգիշտիի փ. 1

ՀՎՀՀ 02593108



Է. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան ՓԲԸ

ք. Երևան, Արարատյան 86

ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ

Հ/Հ 220098532017000

ՀՎՀՀ 01800813



Մ. Մինասյան

(ստորագրություն)

Կ.Տ

4. Ջրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:
 5. Հենարանային մասերի պարբերական զննում, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:
 6. Թուջե բազրիքների մաքրում ձեռքով կամ սարքավորումներով, լավորակ ներկում (պատիննա), լուսավորության սյուների և պաշտպանական խողովակի տեղային ներկում:
 7. Անվահորիչի բրկների վերանորոգում, ծեփամածկում և ներկում, ափային մասերի բազալտե հենապատերի, բազալտե թասակների մաքրում, հղկում, վերանորոգում:
 8. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

2. Մեծ կամրջի մոտ Հրազդան գետի վրայի կամուրջ

Երկարությունը – 34 մ
 Լայնությունը – 9.5մ
 Երկայնական ստատիկ սխեման - անհողանի կամար – 11+11=22 մ, ե/բ
 Երթ.մասի լայնական սխեման - 1.5+6.5+1.5մ
 Հաշվարկային բեռ - H-13
 Կառուցման տարին – 1954թ.

1. Թռիչքային կառուցվածքի ե/բ սայի և կամարի մակերևույթի պարբերական զննում , ճաքերի և վնասվածքների հայտնաբերման դեպքում՝ նորոգում:
 2. Հենարանների մակերևույթի պարբերական զննում, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:
 3. Բազրիքների, ուղղում, նորոգում, ամրացում անհրաժեշտության դեպքում՝ ներկում:
 4. Երթևեկելի մասի ասֆալտետոնե ծածկի մասնակի նորոգում և ճաքերի լցում բիտումային մաստիկայով:
 5. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

3. Հաղթանակի կամուրջ Հրազդան գետի վրա

Երկարությունը – 200.6 մ
 Լայնությունը – 31.8մ
 Երկայնական ստատիկ սխեման - 2x8+3x34+2x8 մ, ե/բ
 Երթ.մասի լայնական սխեման - 3+25+3մ
 Հաշվարկային բեռ H-13, T-13
 Կառուցման տարին – 1945թ.

1. Կամարների վերին մակերևույթից մշտական ջրահեռացման ապահովում:

2. Կամրջի տակի ճանապարհների աշխատանքային վիճակի ապահովում:

3. Աջափնյա աստիճանների աշխատանքային վիճակի ապահովում:

4. Կամարների և հենարանների մշտական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:

5. Շատ անհրաժեշտության բազրիքների և լուսավորության սյուների տեղային ներկում:

6. Մայրերի ծածկի վնասվածքների տեղային նորոգում:

7. Շատ անհրաժեշտության եզրաքարերի ներկում:

8. Երթևեկելի մասի և մայրերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

9. Զրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

4. Բարելավմության հրապարակի տարբեր մակարդակներով տրանսպորտային հանգույց
 Երկարությունը – 162.2 մ
 Լայնությունը – 9.0մ
 Երկայնական ստառիկ սխեման – 27+26.1+24+25+24+2x18 մ,
 ե/բ
 Հաշվարկային բեռ – А-11, НК-80
 Կառուցման տարին – 2007թ.

1. Թոփքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

2. Հենարանների մակերևույթի պարբերական զննում, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:

3. Բազրիքների ուղղում, նորոգում, ամրացում, անհրաժեշտության դեպքում՝ ներկում:

4. Դեֆորմացիոն կարերի մաքրում կեղտից, լցում բիտումային մաստիկայով, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:

5. Երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի ճաքերի լցում բիտումային մաստիկայով:

6. Հենարանային մասերի պարբերական զննում, մաքրում կեղտից և ժանգից, մշակում գրաֆիտային քսուկով և ներկում:

7. Անվարիչի բլրկների ներկում:

8. Ափային հենարանների մերձակա տարածքի մաքրում աղբից:

9. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

10. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

11. Ստորին հարթությունում հենարանների պաշտպանիչ բլրկների ուղղում և ներկում:

5.9. Նժդեհի պողոտայի ուղետար

Երկարությունը – 324.3 մ

Լայնությունը – 27,2մ

Երկայնական սխեման 5x14,1+2x28+6x14,1+2x28+5x14,1մ, ե/բ

Լայնական սխեման 3.3+20,6+3.3մ

Հաշվարկային բեռ H-30, T-13

Կառուցման տարին – 1963թ.

1. Դեֆորմացիոն կարերի մաքրում կեղտից և փոշուց, լցում բիտումային մաստիկայով:

2. Հենարանային մասերի պարբերական զննում, անհրաժեշտության դեպքում նրանց քսուկապատում և ներկում:

3. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

4. Ջրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի մշտական ապահովում:

5. Աստիճանների անխափան աշխատանքի մշտական ապահովում:

6. Կամրջի երթևեկելի մասի և մայթերի ասֆալտբետոնե ծածկի ճաքերի լցում բիտումե մաստիկայով:

7. Անհրաժեշտության դեպքում բազրիքների ուղղում և ամրացում:

8. Թռիչքային կառուցվածքի և հենարանների երկաթբետոնե կոնստրուկցիաների պարբերական զննում:

9. Ափային հենարանների ֆերմատակերի մաքրում կեղտից:

6. Երևան քաղաքի շրջանցման Դավթաշենի ուղեանց

ՊԿ18+54-ում

Երկարությունը – 30.015մ

Լայնությունը – 20.4մ

Երկայնական ստատիկ սիւեման – 1x28 մ, ե/բ

Երթ.մասի լայնական սիւեման – 0.79+17.4+0.79մ

Հաշվարկային բեռ A-14, HK-80

Կառուցման տարին – 2018թ.

1.<Ենարանային մասերի պարբերական զննում, մաքրում, ներկում և քսուկապատում:

2.Ջրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

3.Թոփչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

4.<Ենարանների պարբերական զննում,վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:

5.Ըստ անհրաժեշտության բազրիքների վերականգնում և տեղային ներկում:

6. Ըստ անհրաժեշտության անվահրիչի բլոկների տեղային ներկում:

7.Երթևեկի մասի և մայրերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

7. Ուղեանց Ռիգայի և Սարալայանցի փոողցների միացման տեղում

Երկարությունը – 12,0մ

Լայնությունը –9,0մ

Երկայնական ստատիկ սիւեման – 1x12մ,ե/բ

Երթ.մասի լայնական սիւեման – 0,75+9,0+0,75մ

Հաշվարկային բեռ – H-30, HK-80

Կառուցման տարին – 2008թ.

1.<Ենարանային մասերի պարբերական զննում, մաքրում կեղտից և ժանգից, շարժական հենարանային մասերի գրաֆիտային քսուկապատում և ներկում:

2.<Ենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

	<p>3.Ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:</p> <p>4.Թոփչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:</p> <p>5.Ափային հենարանների պարբերական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:</p> <p>6.Ըստ անհրաժեշտության բազրիքների ներկում:</p> <p>7. Ըստ անհրաժեշտության անվահրիչի բլոկների վերանորոգում և տեղային ներկում:</p> <p>8.Երթևեկի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:</p> <p>8. Գաշոյան փող. ուղեծառ Երկարությունը -80,1մ Լայնությունը -23,5մ Երկայնական ստառիկ սխեման - 15+2x21+15մ, ե/բ Երթ.մասի լայնական սխեման - 3,75+16+3,75մ Հաշվարկային բեռ - H-30, HK-80 Կառուցման տարին - 1979թ.</p> <p>1.<Ենարանային մասերի պարբերական զննում, մաքրում, ներկում, քսուկապատում:</p> <p>2.<Ենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:</p> <p>3.Ջրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:</p> <p>4.Թոփչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:</p> <p>5.Ափային և միջանկյալ հենարանների պարբերական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:</p> <p>6.Ըստ անհրաժեշտության բազրիքների ներկում:</p> <p>7.Արժեքապատնեշների քայքայված մակերևույթների վերականգնում և ներկում:</p> <p>8.Երթևեկի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:</p> <p>9.Բազրիքի տակի քիվերի վերականգնում:</p>
--	--

9. Ուղեանց Վատուտիքի փողոցում՝ Վաղարշյան փողոցի վրայով

- Երկարությունը – 67.2 մ
Լայնությունը – 23.65մ
Երկայնական ստատիկ սխեման - 15+21+15մ, Ե/Ք
Երթ.մասի լայնական սխեման - 2.45+18.75+2.45մ
Հաշվարկային բեռ A-11, HK-80
Կառուցման տարին – 2000թ.
1. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:
 2. Հենարանային մասերի պարբերական զննում, մաքրում կեղտից և ժանգից, մշակում համապատասխան քսուկով:
 3. Ջրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:
 4. Կամրջի երթևեկելի մասի և մայթերի ասֆալտբետոնե ծածկի ճաքերի լցում բիտումային մաստիկայով:
 5. Արգելապատնեշների և բազրիքների ուղղում և ներկում:
 6. Թռիչքային կառուցվածքի և հենարանների երկաթբետոնե կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:
 7. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:
 8. Թռիչքային կառուցվածքի և ափային հենարանների ճակատային մակերևույթների ներկի շերտի վերականգնում:

- 10. Դավթաշենի կամուրջ**
Երկարությունը – 496մ
Լայնությունը – 32մ
Երկայնական ստատիկ սխեման – 1x15+64+3x80+48.9+4x28 մ, Ե/Ք, 15ո՛հժԺ
Երթ.մասի լայնական սխեման – 3+26+3մ
Հաշվարկային բեռ – A11, HK-80
Կառուցման տարին – 2000թ.

1. Գերամուր հեղուանների փաստացի պտտող մոմենտի ստուգում հաշվարկային համեմատ դինամոմետրիկ բանալիի միջոցով գոյություն ունեցող տեխնոլոգիայով:

2. Ավտոմատ եռակցված կարերի և ձեռքով եռակցված կարերի ակնադիտական զննում:

3. Դեֆորմացիոն կարերի սեղմող սարքավորումների ստուգում և ձգում, կարերի նորոգում, մաքրում, լցում մաստիկայով:

4. Հենարանային մասերի զննում և նրանց առանցքների նկատմամբ երկայնական և լայնական տեղաշարժերի ուսումնասիրություն, գրաֆիտային քտակապատում:

5. Դիտարկման սարքավորումների (սայլակների), ուղիների, էլեկտրոշինտավորվողների (տրոյլերային գծերի) պարբերական ուղղում և աշխատանքային վիճակի ապահովում:

6. Սարքավորումների մեխանիկական և էլեկտրական մասերի վերականգնում, ընթացիկ վերանորոգում:

7. Անհրաժեշտության դեպքում մետաղական կոնստրուկցիաների տեղային ներկում(քայքայումները կանխելու նպատակով, մինչև կամրջի հերթական ներկումը), մետաղական կոնստրուկցիաների կոնստրուկտային մակերևույթների եզրերի հերմետիկության վիճակի հսկում և վերականգնում:

8. Ջրահեռացման ուղիների և խողովակների մաքրում և անխափան աշխատանքի ապահովում:

9. Ափային հենարանի լիցքի կոների դեֆորմացված տեղամասերի պարբերական ուղղում, մաքրում աղբից և բուսականությունից:

10. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

11. Դալթաշենի տրանսպորտային հանգույցի 7-րդ ուղետալի ուղեանց
 Երկարությունը – 36մ
 Լայնությունը –10մ
 Երկայնական ստատիկ սխեման –2x18մ, ե/բ
 Երթ.մասի լայնական սխեման – 1,0+8,0+1,0մ
 Հաշվարկային բեռ – А-11, НК-80
 Կառուցման տարին – 2001թ.

1. Դեֆորմացիոն կարերի աշխատանքային վիճակի ապահովում, լցում բիտումային մաստիկայով:

2. Հենարանային մասերի պարբերական զննում, քսուկապատում, ներկում, անհրաժեշտության դեպքում ուղղում:

3. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

4. Ջրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

5. Թոփքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

6. Ափային և միջանկյալ հենարանների պարբերական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:

7. Բազրիքների տեղային ներկում:

8. Մոտեցումների մետաղական արգելապատնեջի վերականգնում և ներկում:

9. Անվահրիչի բլովների ներկում:

10. Երթուղեկային մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

11. Թոփքային կառուցվածքի և ափային հենարանների ճակատային մակերևույթների ներկի շերտի վերականգնում:

12. Ուղեանցի մոտեցման նստվածքային տեղամասի վերականգնում:

12. Դավաթաշնի տրանսպորտային հանգույցի 2-րդ ուղետարի ուղեանց

Երկարությունը – 36մ

Լայնությունը – 11մ

Երկայնական ստառիկ սխեման – 2x18մ, Ե/Ք

Երթ.մասի լայնական սխեման – 1,5+8,0+1,5մ

Հաշվարկային բեռ – А-11, НК-80

Կառուցման տարին – 2001թ.

1. Դեֆորմացիոն կարերի աշխատանքային վիճակի ապահովում, Լցում բիտումային մաստիկայով:

2. Հենարանային մասերի պարբերական զննում, քսուկապատում, ներկում, անհրաժեշտության դեպքում ուղղում:

3. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

4. Ջրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

5. Թոփչբային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

6. Ափային և միջանկյալ հենարանների պարբերական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:

7. Բազրիքների տեղային ներկում:

8. Մոտեցումների մետաղական արգելապատնեշի վերականգնում և ներկում:

9. Անվահրիչի բլովների ներկում:

10. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

11. Թոփչբային կառուցվածքի և ափային հենարանների ճակատային մակերևույթների ներկի շերտի վերականգնում:

13. Դավթաշենի տրանսպորտային հանգույցի

կենտրոնական ուղեանց

Երկարությունը – 40մ

Լայնությունը – 29մ

Երկայնական ստատիկ սխեման – 2x18մ, ե/բ

Երթ.մասի լայնական սխեման – 2,0+25,0+2,0մ

Հաշվարկային բեռ – А-11, НК-80

Կառուցման տարին – 2000թ.

1. Դեֆորմացիոն կարերի աշխատանքային վիճակի ապահովում, ցրում բխտումային մաստիկայով:

2. Հենարանային մասերի պարբերական զննում, քսուկապատում, ներկում, անհրաժեշտության դեպքում՝ ուղղում:

3. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

4. Ջրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

5. Թոփչբային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

6. Ափային և միջանկյալ հենարանների պարբերական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:

7. Բազրիքների տեղային ներկում:

8. Մոտեցումների մետաղական արգելապատնեշի վերականգնում և ներկում:

9. Անվահորիչի բլուկների ներկում:
 10. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:
 11. Թոփչքային կառուցվածքի և ափային հենարանների ճակատային մակերևույթների ներկի շերտի վերականգնում:
14. Մյաննիկյան-Աճառյան N1 ուղետար
 Երկարությունը -140մ
 Լայնությունը -14,5մ
 Երկայնական ստատիկ սխեման - 25,2+47,6+25,2մ, Ե/Ք
 Երթ.մասի լայնական սխեման - 1,5+10,5+2,5մ
 Հաշվարկային բեռ - H-30, HK-80
 Կառուցման տարին - 1973թ.

1. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:
 2. Հենարանային մասերի պարբերական զննում, մաքրում կեղտից և ժանգից, շարժական հենարանային մասերի մշակում գրաֆիտային քսուկով:
 3. Թոփչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:
 4. Ափային և միջանկյալ հենարանների պարբերական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:
 5. Ըստ անհրաժեշտության բազրիքների ներկում:
 6. Ըստ անհրաժեշտության անվահորիչի բլուկների տեղային ներկում:
 7. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

15. Մյաննիկյան-Աճառյան N2 ուղետար
 Երկարությունը -96մ
 Լայնությունը -14,7մ
 Երկայնական ստատիկ սխեման - 17,5+23,2+17,5 մ, Ե/Ք
 Երթ.մասի լայնական սխեման - 0,9+11,4+2,4մ
 Հաշվարկային բեռ - H-30, HK-80
 Կառուցման տարին - 1973թ.

1. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

2. Հենարանային մասերի պարբերական զննում, մաքրում կեղտից և ժանգից, շարժական հենարանային մասերի մշակում գրաֆիտային քսուկով:

3. Զրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

4. Թորիչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

5. Ափային և միջանկյալ հենարանների պարբերական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:

6. Շատ անհրաժեշտության՝ բազրիքների տեղային ներկում:

7. Շատ անհրաժեշտության՝ անվահրիչի բլոկների ներկում:

8. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

9. Լիցքի կոնքերի վերականգնում, դեֆորմացված տեղամասերի ուղղում:

16. Երևան-Սևան ա/ճ-ի ուղեանց

Երկարությունը - 264մ

Լայնությունը - 17մ

Երկայնական ստատիկ սխեման - 15x12,5+2x32,4+1x11մ, ե/բ

Երթ.մասի լայնական սխեման - 1+15+1մ

Հաշվարկային բեռ - H-30, HK-80

Կառուցման տարին - 1975թ.

1. Դեֆորմացիոն կարերի մաքրում կեղտից, լցում բիտումային մաստիկայով:

2. Հենարանային մասերի պարբերական զննում, մաքրում կեղտից և ժանգից, շարժական հենարանային մասերի մշակում գրաֆիտային քսուկով:

3. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

4. Զրահեռացման խողովակների մաքրում, ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

5. Թորիչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

6. Ափային և միջանկյալ հենարանների պարբերական զննում, վնասվածքների բացահայտման դեպքում՝ նորոգում:

7. Շատ անհրաժեշտության բազրիքների ներկում:

8. Լիցքի կոնքի զննում, անհրաժեշտության դեպքում՝ դեֆորմացված տեղամասերի ուղղում:

9. Ըստ անհրաժեշտության անվահորիչի բլրկների տեղային ներկում:

10. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

17. Ուղեանց Իսակովի պողոտայում՝ Սեբաստիա փողոցի վրայով

Երկարությունը – 50 մ

Լայնությունը – 28.6մ

Երկայնական ստատիկ սխեման – 2x18 մ, Ե/բ

Երթևեկելի մասի լայնական սխեման –

3.15+10.75+0.5+10.75+3.15մ

Հաշվարկային բեռ – H-30, HK-80

Կառուցման տարին – 1966թ.

1. Թռիչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

2. Հենարանների մակերևույթի պարբերական զննում, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:

3. Երթևեկելի մասի աֆալտբետոնե ծածկի ճաքերի լցում բիտումային մաստիկայով:

4. Անվահորիչի բլրկների ներկում:

5. Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

6. Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

7. Ափային հենարանների ֆերմատակերի մակերևույթի քսահարթեցում և ներկում:

8. Միջանկյալ հենարանի՝ տրանսպորտային հոսքերից պաշտպանիչ միջոցառման իրականացում:

18. Կամուրջ Երևան ՀԷԿ-ի մոտ

Երկարությունը – 34մ

Լայնությունը – 9.6մ

Երկայնական ստատիկ սխեման – անհողանի կամար - 11+11մ22մ, Ե/բ

Երթ.մասի լայնական սխեման – 1.4+6.4+1.4մ

Հաշվարկային բեռ – H-13

Կառուցման տարին – 1954թ.

1.Թոփչքային կառուցվածքի ե/բ սայի և կամարի մակերևույթի պարբերական զննում, ճաքերի և վնասվածքների հայտնաբերման դեպքում՝ նորոգում:

2.Հենարանների մակերևույթի պարբերական զննում, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:

3.Բազրիքների ուղղում, նորոգում, ամրացում, անհրաժեշտության դեպքում՝ ներկում:

4.Երթևեկելի մասի աֆալտբետոնե ծածկի մասնակի նորոգում և ճաքերի լցում բիտումային մաստիկայով:

19. Հերացու, Սարայանցի և Ավետիսյան փողոցները

միացնող նոր մայրուղու էստակարա

Երկարությունը – 49.95 մ

Լայնությունը – 9.0մ

Երկայնական ստատիկ սխեման – 2x24 մ, ե/բ

Երթ.մասի լայնական սխեման – 0.5+8.0+0.5մ

Հաշվարկային բեռ – A-11, HK-80

Կառուցման տարին – 2008թ.

1.Թոփչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում՝ նորոգում:

2.Հենարանների մակերևույթի պարբերական զննում, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:

3.Բազրիքների ուղղում, նորոգում, ամրացում, անհրաժեշտության դեպքում՝ ներկում:

4. Դեֆորմացիոն կարերի մաքրում կեղտից, լցում բիտումային մաստիկայով, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:

5.Երթևեկելի մասի աֆալտբետոնե ծածկի ճաքերի լցում բիտումային մաստիկայով:

6. Ըստ անհրաժեշտության անվահրիչի բլոկների տեղային ներկում:

7.Ափային հենարանների մերձակա տարածքի մաքրում աղբից:

8.Հենարանների ֆերմատակերից մշտական ջրահեռացման ապահովում:

9.Երթևեկելի մասի և մայթերի պարբերական մաքրում կեղտից և հողային կուտակումներից:

20. Հերացու, Սարալանցի և Ալեւտիսյան փողոցները միացնող նոր մայրուղու ուղեանց

Երկարությունը – 59.35 մ
Լայնությունը – 13.0մ
Երկայնական ստատիկ սխեման – 2x28 մ, ե/բ
Երթ.մասի լայնական սխեման – 0.5+12.0+0.5մ
Հաշվարկային բեռ – А-11, НK-80
Կառուցման տարին – 2008թ.

- 1.Թռիչքային կառուցվածքի կոնստրուկցիաների պարբերական զննում, վնասվածքների և ճաքերի բացահայտման դեպքում նորոգում:
- 2.<ենարանների մակերևույթի պարբերական զննում, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:
- 3.Բազրիքների ուղղում, նորոգում, ամրացում, անհրաժեշտության դեպքում՝ ներկում:
- 4.Դեֆորմացիոն կարերի մաքրում կեղտից, լցում բիտումային մաստիկայով, անհրաժեշտության դեպքում՝ նորոգում:
- 5.Երթևեկելի մասի սաֆալտբետոնե ծածկի ճաքերի լցում բիտումային մաստիկայով:
